

Պատանի քիմիկոսների մրցաշար

ԿԱՐԳ

Պատանի քիմիկոսների մրցաշարը մեկն է «Այբ» կրթական հիմնադրամի (այսուհետ՝ Կազմակերպիչ) այն բազմաթիվ ծրագրերից, որոնք ուղղված են հանրակրթության ոլորտում տաղանդավոր երեխաների բացահայտմանը:

Պատանի քիմիկոսների մրցաշարը (այսուհետ՝ Մրցաշար) թիմային մրցույթ է, որում 9-12-րդ դասարանների աշակերտները դրսևորում են բարդ քիմիական խնդիրներ լուծելու, լուծումները համոզիչ ձևով ներկայացնելու, գիտական քննարկումներ վարելու իրենց ունակություններն ու հմտությունները:

Մրցաշարի հենակետային առարկան քիմիան է:

ՄՐՑԱՇԱՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՓՈՒԼԵՐԸ

Մրցաշարի նպատակներն են՝

- աշակերտներին ներգրավել գործնական գիտական գործունեության մեջ,
- նրանց սովորեցնել խմբային աշխատանքի չափանիշներն ու ձևերը,
- աշակերտների մեջ հետաքրքրություն առաջացնել քիմիայի նկատմամբ,
- պայմաններ ստեղծել աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացման համար,
- խթանել քիմիայի արտադասարանական աշխատանքների կազմակերպումը,
- զարգացնել միջառարկայական կապերը,
- աշակերտների հետ աշխատանքում ներգրավել առաջատար գիտնականների, ասպիրանտների և ուսանողների,
- բարձրացնել ուսուցիչների մասնագիտական պատրաստվածության մակարդակը:

Մրցաշարն անցկացվում է երեք փուլով:

- **Քառորդ եզրափակիչ փուլ:** Թիմերը մասնակցում են քիմիական հարցախաղին, որի ընթացքում սահմանված ժամանակահատվածում, առկա կամ առցանց հարթակում պատասխանում են հարցաշարի հարցերին: Այս փուլի նպատակն է թիմերի վարկանշավորումը:
- **Կիսաեզրափակիչ փուլ:** Ըստ քառորդ եզրափակիչ փուլում վարկանիշավորման թիմերը մասնակցում են կիսաեզրափակիչ մարտերին համապատասխան խմբերով:
- **Եզրափակիչ փուլ:** Կիսաեզրափակիչ փուլում հաղթող ճանաչված թիմերը մասնակցում են եզրափակիչ մարտին, որի արդյունքում որոշվում է Մրցաշարի հաղթողը:

ՄՐՑԱՇԱՐԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ

Մրցաշարի կիսաեզրափակիչ և եզրափակիչ փուլերի ընթացքում քննարկվում են նախօրոք հրապարակված առաջադրանքներ: Դրանք բաց տեսակի առաջադրանքներ են, այսինքն՝ չունեն միանշանակ և վերջնական լուծում, ինչը հնարավորություն է տալիս նույն հարցի շուրջ ունենալու լուծման բազմատեսակ մոտեցումներ: Առաջադրանքների պայմանները ձևակերպվում են հակիրճ ու հստակ և չեն պարունակում լուծման համար անհրաժեշտ բոլոր տվյալները, ինչն իր հերթին թույլ է տալիս ինքնուրույն կատարել որոշ ենթադրություններ և ընտրել պատասխանի հնարավոր իրատեսական տարբերակը: Առաջադրանքները կատարվում են խմբովին: Դրանց լուծման համար անհրաժեշտ է իրականացնել տեսական և փորձնական հետազոտություններ: Թույլատրվում է Մրցաշարի կիսաեզրափակիչ և եզրափակիչ փուլերին նախապատրաստվելիս օգտագործել ցանկացած գրական սկզբնաղբյուր, ինչպես

նաև խորհրդակցել մասնագետների հետ: Մարտերի անցկացման ընթացքում որևէ աղբյուրից (համակարգիչ, հեռախոս, գիրք, տետր) օգտվել կամ որևէ մեկի հետ խորհրդակցել չի թույլատրվում:

ժյուրիի նախագահի գլխավորությամբ գործող գիտամեթոդական հանձնախումբը նախապես հրապարակում է առաջադրանքների ցանկը:

ՄՐՑԱՇԱՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

◆ Թիմերի կազմ և մասնակիցների տարիք

Մրցաշարին մասնակցող թիմերից յուրաքանչյուրի կազմում ընդգրկվում է հիմնական և ավագ դպրոցների կամ միջնակարգ մասնագիտական հաստատությունների **9-12-րդ դասարանների 4-5 աշակերտ: Թիմում չեն կարող ընդգրկվել բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները:**

Թիմի **ավագը** գլխավորում է իր թիմը և նրա պաշտոնական ներկայացուցիչն է Մրցաշարի ընթացքում:

Թիմն ունի մեկ **ղեկավար:** Ղեկավարը կրում է նյութական և աղմինիստրատիվ պատասխանատվություն թիմի անդամների կյանքի և առողջության համար: Մրցաշարի ընթացքում ղեկավարն իրավունք ունի մասնակցելու ժյուրիի և հաշվիչ հանձնաժողովի աշխատանքներին որպես դիտորդ: Ղեկավարը թիմի պաշտոնական ներկայացուցիչը չէ և իրավունք չունի ծանոթանալու ժյուրիի, հաշվիչ հանձնաժողովի արձանագրություններին, մասնակցելու Մրցաշարի արդյունքների կամ բողոքարկման քննարկումներին:

Թիմն ունի նաև **մարզիչներ** (մեկ կամ ավելի), որոնք հանդես են գալիս որպես թիմի անդամների խորհրդատու՝ առաջադրանքների առարկայական կողմը պարզաբանելու համար:

Մրցաշարին մասնակցելու համար թիմը ներկայացնում է հայտ, որում պետք է նշված լինի թիմի յուրաքանչյուր անդամի, այդ թվում նաև ավագի ազգանունը, անունը, հայրանունը (ամբողջությամբ), ղեկավարի և մարզչի (մարզիչների) պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը (ամբողջությամբ): Հայտի ձևին կարելի է ծանոթանալ Մրցաշարի պաշտոնական կայքում:

◆ ժյուրիի կազմ

ժյուրիի կազմը հաստատում է «Այբ» կրթական հիմնադրամի տնօրենը: Ժյուրիի կազմում ընդգրկվում են գիտական աշխատողներ, ոլորտի պատասխանատուներ, ուսուցիչներ, ասպիրանտներ և բարձր կուրսերի ուսանողներ: Թիմերի ղեկավարները և մարզիչները չեն կարող ընդգրկվել ժյուրիի կազմում: Ժյուրիի աշխատանքները ղեկավարում է նախագահը, որը բաշխում է պարտականությունները ժյուրիի անդամների միջև: Յուրաքանչյուր մարտից առաջ ժյուրիի նախագահը կամ նրա տեղակալը ժյուրիի անդամներին բաժանում է խմբերի: Չի թույլատրվում փոփոխել ժյուրիի անդամների կազմը մարտերի ընթացքում: Եթե ժյուրիի որևէ անդամ որևէ պատճառով չի կարողանում շարունակել աշխատանքը, նրա արձանագրությունը համարվում է անվավեր:

◆ ժյուրիի նախագահ

ժյուրիի նախագահը հաստատվում է «Այբ» կրթական հիմնադրամի տնօրենի հրամանով: Նախագահն ունի մեկ կամ մի քանի տեղակալ: Նախագահը մասնակցում է ժյուրիի կազմավորմանը և ղեկավարում նրա աշխատանքները: Նախագահը՝

- գլխավորում է առաջադրանքները կազմող գիտամեթոդական հանձնախումբը,
- բաշխում է հանձնարարությունները ժյուրիի անդամների միջև,
- պատասխանատու է գնահատման անաչառության համար,
- վերահսկում է Մրցաշարի կանոնների կատարումը,
- ժյուրիի անդամներին բաժանում է խմբերի,
- նշանակում է հաշվիչ հանձնաժողովի անդամներին և պատասխանատուին:

Եթե նախագահը չի կարող կատարել իր պարտականությունները, ապա դրանք կատարում է նրա տեղակալներից մեկը:

✦ **Մրցաշարի փորձագետ-խորհրդատու**

Մրցաշարի փորձագետ-խորհրդատուն հաստատվում է «Այբ» կրթական հիմնադրամի տնօրենի հրամանով: Մրցաշարի փորձագետ-խորհրդատուն՝

- ժյուրիի և կազմկոմիտեի համատեղ նիստում որոշում է ընդունում բողոքարկման վերաբերյալ,
- ժյուրիի և կազմկոմիտեի համատեղ նիստում մասնակցում է բողոքարկման քննարկմանը,
- առաջադրանքները կազմելու ընթացքում մասնակցում է Մրցաշարի գիտամեթոդական հանձնաժողովի աշխատանքներին,
- մասնակցում է Մրցաշարի կանոնների հետ կապված վիճահարույց հարցերի լուծմանը:

✦ **Մրցաշարի հաշվիչ հանձնաժողով**

Հաշվիչ հանձնաժողովը կազմավորվում է ավագ դասարանների աշակերտներից, ուսանողներից կամ Մրցաշարի կազմակերպիչներից, որոնք չեն մասնակցում Մրցաշարին:

Յուրաքանչյուր խմբի հաշվիչ հանձնաժողով բաղկացած է երկու անդամից: Հաշվիչ հանձնաժողովը, ինչպես և տվյալ մարտը վարողը, պատասխանատու է միավորները ճիշտ հաշվելու համար: Յուրաքանչյուր գործողության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովը ժյուրիի անդամների գնահատականներն անցկացնում է արձանագրության մեջ: Արդյունքները տրամադրվում են մարտը վարողին՝ դրանք հրապարակելու նպատակով: Միավորների հաշվարկը կատարվում է հատուկ մշակված համակարգչային ծրագրով:

✦ **Մրցաշարի ընթացքում անցկացվող միջոցառումներ**

Մրցաշարն անցկացվում է կազմկոմիտեի հաստատած օրակարգով: Մրցաշարի ընթացքում անցկացվում են՝

- քառորդ եզրափակիչ փուլ (քիմիական հարցախաղ),
- կիսաեզրափակիչ մարտեր,
- եզրափակիչ մարտ:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ

Մասնակցության վճարը՝

- կազմում է 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ յուրաքանչյուր թիմի համար (վճարներից գոյացող գումարներն օգտագործվում են բացառապես կազմակերպչական աշխատանքների համար).
- կատարվում է մինչև կազմակերպչի կայքում նշված վերջնաժամկետը.
- կատարելով՝ թիմը հաստատում է իր մասնակցությունը Մրցաշարին (կազմակերպչի **նշած վերջնաժամկետից հետո մասնակցությունից հրաժարվելու դեպքում մասնակցության վճարը չի վերադարձվում**).
- կատարվում է բանկային փոխանցման միջոցով: Մասնակից թիմի ղեկավարը/մարզիչը կամ դպրոցը, որը ներկայացնում է թիմը, մասնակցության վճարը փոխանցում է «Այբ» կրթական հիմնադրամի հետևյալ հաշվեհամարին՝ «Կոնվերսանկ» 1930055663050100: Վճարումն անելիս պետք է նշել թիմի անվանումը և վճարման նպատակը՝ «ՊԶՄ մասնակցության վճար»:

ՄՐՑԱՇԱՐԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Մրցաշարին մասնակցում են նախապես հայտագրված թիմերը: Կիսաեզրափակիչ և եզրափակիչ մարտերի ընթացքում ամբողջ թիմի ելույթը գնահատվում է թիմի մասնակիցների հավաքած վարկանիշային միավորների հանրագումարով: Մասնակիցները յուրաքանչյուր մարտի ժամանակ ստանում են վարկանիշային միավորներ: Այն մասնակիցները, ովքեր չեն մասնակցել տվյալ մարտին, համարվում են մասնակից, բայց ստանում են վարկանիշային 0 միավոր:

Յուրաքանչյուր մարտի մասնակցում է 3, 2 կամ 4 թիմ՝ կախված թիմերի ընդհանուր թվից:

Մարտն ընթանում է 3 (2 կամ 4) գործողությամբ: Յուրաքանչյուր գործողության ընթացքում յուրաքանչյուր թիմ հանդես է գալիս 3 (2 կամ 4) դերով՝ **զեկուցող** (Չ), **ընդդիմախոս** (Ը), **գրախոս** (Գ): Եթե մարտին մասնակցում է չորս թիմ, ապա նրանցից յուրաքանչյուրը հերթով հանդես է գալիս նաև **դիտորդի** (Դ) դերում:

Յուրաքանչյուր մարտում թիմերը փոխվում են դերերով՝ ըստ աղյուսակ 1-ում բերված սխեմայի:

Աղյուսակ 1.

մարտ 3 թիմով				մարտ 2 թիմով			մարտ 4 թիմով				
թիմ	գործողություն			թիմ	գործողություն		թիմ	գործողություն			
	1	2	3		1	2		1	2	3	4
1	Չ	Գ	Ը	1	Չ	Ը	1	Չ	Դ	Գ	Ը
2	Ը	Չ	Գ	2	Ը	Չ	2	Ը	Չ	Դ	Գ
3	Գ	Ը	Չ				3	Գ	Ը	Չ	Դ
							4	Դ	Գ	Ը	Չ

Մարտի ընթացքում թիմերը չեն կարող խորհրդակցել թիմի անդամ չհանդիսացող որևէ մեկի հետ: Բոլոր վիճելի հարցերը լուծում է վարողը՝ ժյուրիի և թիմերի ավագների հետ միասին:

Մարտից առաջ ժյուրիի անդամները ծանոթանում են մարտի մասնակից թիմերին: Դերերն առաջին մարտում բաշխվում են ըստ ավագների մրցույթի արդյունքների: Ավագների մրցույթի առաջադրանքը կազմվում է Մրցաշարի առաջադրանքները մշակող հանձնաժողովի կողմից: Առաջադրանքները հրապարակվում են վարողների կողմից յուրաքանչյուր մարտի մեկնարկից առաջ: Մրցույթի պատշաճությունը և ավագների հարցերի պատասխանների ճշտությունը գնահատում է ժյուրին: Առաջին գործողության ժամանակ թիմերին տրվում է դերերի ընտրության առաջնահերթություն ըստ ավագների զբաղեցրած տեղերի: Բոլոր մարտերում ավագների մրցույթի առաջադրանքները նույնն են:

Ավագների մրցույթի անցկացման ժամանակ պատասխանների հերթականությունը որոշում է տվյալ մարտը վարողը: Բոլոր կիսաեզրափակիչ փուլերում ավագներին տրվում են նույն հարցերը: Ծիշտ պատասխան տված ավագը զբաղեցնում է առաջին տեղը: Եթե մեկից ավելի ավագներ տալիս են ճիշտ պատասխան, խաղարկվում է երկրորդ հարցը: Առաջին տեղը զբաղեցրած ավագն ինքն է որոշում իր թիմի դերը մարտի առաջին գործողության ժամանակ:

◆ **Մարտի օրակարգ**

1.	Ընդդիմախոսն առաջարկում է զեկուցողին զեկույցի թեման	1 րոպե
2.	Չեկուցողն ընդունում կամ մերժում է առաջարկանքը	1 րոպե
3.	Չեկուցողը պատրաստվում է ելույթի	1 րոպե
4.	Չեկույց	7 րոպե
5.	Ընդդիմախոսը ճշգրտող հարցեր է տալիս զեկուցողին, և վերջինս պատասխանում է	2 րոպե
6.	Ընդդիմախոսը պատրաստվում է ելույթի	2 րոպե
7.	Ընդդիմախոսություն	5 րոպե
8.	Չեկուցողն ու ընդդիմախոսը բանավիճում են	3 րոպե
9.	Գրախոսը ճշգրտող հարցեր է տալիս զեկուցողին և ընդդիմախոսին, և վերջիններս պատասխանում են	2 րոպե
10.	Գրախոսը պատրաստվում է ելույթի	2 րոպե
11.	Գրախոսություն	3 րոպե
12.	Չեկուցողը, ընդդիմախոսն ու գրախոսը բանավիճում են	5 րոպե
13.	Չեկուցողի, ընդդիմախոսի և գրախոսի թիմերը ելույթ են ունենում	1-ական րոպե
14.	Գրախոսը, ընդդիմախոսն ու զեկուցողը եզրափակիչ խոսք են ասում	30-ական վայրկյան
15.	Ժյուրին հարցեր է տալիս	5 րոպե
16.	Գնահատում	5 րոպե
17.	Ժյուրիի խոսքը	մինչև 3 րոպե
18.	Լրացուցիչ ելույթ (անհրաժեշտության դեպքում)	1 րոպե

ԸՆԴԱՄԵՆԸ

մոտ 1 ժամ

Երկթիմանոց մարտում վերը նշված 9-12-րդ կետերը բացակայում են: Չորս թիմով մարտում թիմերից մեկը հանդես է գալիս դիտորդի դերում և չի մասնակցում քննարկմանը: Վարողն իրավունք ունի ելույթների տևողությունն ավելացնելու ոչ ավելի, քան երկու րոպեով:

- Յուրաքանչյուր մարտի ընթացքում բացառությամբ զեկույցի փուլի, թիմն իրավունք ունի վերցնելու րոպեանոց ընդմիջում (time out) մարտի մասնակից թիմակցին օգնելու համար:

◆ **Թիմերի ելույթները մարտի ժամանակ**

Չեկուցողը (կարող է հանդես գալ համազեկուցողի հետ, ինչի մասին հայտարարվում է ելույթի սկզբում) ներկայացնում է առաջարկված առաջադրանքի լուծման իր թիմի տարբերակը՝ հիմնական ուշադրությունը բևեռելով խնդրի քիմիական կողմի լուսաբանման վրա: Ցանկալի է օգտագործել նախապես պատրաստված նկարներ, սխեմաներ, պաստառներ, լուսանկարներ, ինչպես նաև մրցաշարի կազմակերպիչների մշակած չափանիշներով ստեղծված սահիկաշարեր և ցույց տալ փորձեր, եթե առաջադրանքը փորձնական բնույթ ունի: Սահիկաշարերի չափանիշներն առանձին նիշքով տեղադրված են մրցաշարի կայքում: Չեկուցողին չի թույլատրվում իր ելույթի ընթացքում օգտվել թղթի վրա կամ որևէ սարքում արված նշումներից:

Ընդդիմախոսը (կարող է հանդես գալ համաընդդիմախոսի հետ, ինչի մասին հայտարարվում է ելույթի սկզբում) արտահայտում է իր քննադատական կարծիքը գեկույցի վերաբերյալ, պարզում առաջադրանքի լուծման մեջ տեղ գտած անճշտություններն ու սխալները և հարցեր տալիս գեկուցողին: Ընդդիմախոսը պետք է նշի առաջադրանքի լուծման, ինչպես նաև գեկույցի դրական կողմերը և հիմնավորի սկզբունքային թերությունները:

Գրախոսը (ելույթ է ունենում մենակ) կարճ գնահատական է տալիս գեկուցողի և ընդդիմախոսի ելույթներին, վերլուծում, թե ինչպես են նրանք կարողացել կատարել իրենց պարտականությունները և ինչպես են ընկալում իրենց քննարկած խնդիրը: Գրախոսն իրավունք ունի հարցեր տալու և՛ գեկուցողին, և՛ ընդդիմախոսին: Եթե գրախոսը եզրակացնում է, որ ընդդիմախոսը չի կարողացել կատարել ստանձնած դերը, ապա համապատասխան հիմնավորումից հետո գրախոսն իր ելույթում կարող է ստանձնել ընդդիմախոսի դերը:

Դիտորդն իրավունք ունի ելույթ ունենալու միայն թիմերի ընդհանուր բանավեճի ժամանակ:

Ծճգրտող հարցերի ժամանակ ընդդիմախոսի և գրախոսի թիմերը կարող են ճշտել ներկայացված ելույթին վերաբերող մանրամասները, քննարկել գեկույցում կամ ընդդիմախոսության մեջ ոչ բավարար լուսաբանված և վիճելի դրույթները: Ծճգրտող հարցեր կարող է տալ համապատասխան թիմի յուրաքանչյուր անդամ՝ ըստ ընտրված դերերի: Հարցերին պատասխանում է միայն մրցակից թիմի կազմում տվյալ դերում հանդես եկող մասնակիցը: Թիմի մյուս անդամները կարող են ելույթ ունենալ միայն վարողի թույլտվությամբ:

Ընդդիմախոսը և գրախոսը իրենց ելույթներով և հարցերով չպետք է առաջարկեն առաջադրանքի լուծման իրենց տարբերակը և ցուցադրեն սեփական փորձերը, ինչը կարգի խստագույն խախտում է: Բանավեճի ժամանակ քննարկվում է միայն գեկուցողի առաջարկած առաջադրանքի լուծումը:

◆ **Սահմանափակումներ համազեկուցողի և համաընդդիմախոսի համար**

Թիմը կարող է առաջադրել գեկուցողի (ընդդիմախոսի) երկու թեկնածու: Այդ դեպքում նրանցից մեկն առաջադրվում է որպես հիմնական գեկուցող (ընդդիմախոս), իսկ երկրորդը՝ համազեկուցող (համաընդդիմախոս): Հիմնական գեկուցողը (ընդդիմախոսը) սկսում է գեկույցը, այնուհետև խոսքը փոխանցում համազեկուցողին (համաընդդիմախոսին): Համազեկուցողի (համաընդդիմախոսի) ելույթը չի կարող լինել հիմնական գեկուցողի (ընդդիմախոսի) ելույթի ժամանակի կեսից ավելի երկար, ընդ որում այն պիտի լինի ոչ ավելի երկար, քան ընդհանուր գեկույցի ավարտին մնացած ժամանակը: Համազեկուցողի (համաընդդիմախոսի) ելույթի ավարտից հետո հիմնական գեկուցողը (ընդդիմախոսը) այլևս չի կարող ելույթ ունենալ, եթե նույնիսկ ելույթին հատկացված ժամանակը դեռ չի ավարտվել: Եթե համազեկուցողը (համաընդդիմախոսը) ելույթ չի ունեցել, նա իրավունք չունի պատասխանելու հարցերին և այդ փուլում դուրս է մնում հետագա անհատական պայքարից: Համազեկուցողի (համաընդդիմախոսի) դուրս մնալը ստուգարքային միավորներ չի բերում նրան անհատական առաջնությունում:

◆ **Ելույթների թվի սահմանափակումներ**

Թիմի յուրաքանչյուր անդամ մեկ մարտի (կիսաեզրափակիչ, եզրափակիչ) ընթացքում կարող է ելույթ ունենալ երկու անգամից ոչ ավելի: Ելույթ է համարվում գեկուցողի, համազեկուցողի, ընդդիմախոսի,

համաընդդիմախոսի և գրախոսի դերերում հանդես գալը: Ծճգրտող հարցերը և բանավեճին տեղից մասնակցելը ելույթ չեն համարվում:

◆ **Թիմերի ելույթների գնահատում**

Յուրաքանչյուր գործողությունից հետո ժյուրին գնահատում է թիմերի ելույթները «3-»-ից (3-ից հաևած) մինչև «5+» (5-ին գումարած) գնահատականներով՝ հաշվի առնելով թիմի անդամների բոլոր ելույթները, հարցերին նրանց տված պատասխանները, մասնակցությունը բանավեճին: Ժյուրիի նշանակած գնահատականները հիմք են ծառայում հետագա անհատական և թիմային առաջնության արդյունքների ամփոփման համար: Ժյուրիի՝ սահմանային գնահատականներ («3-» և «5+») նշանակած անդամները պետք է հիմնավորեն այդ գնահատականները:

Մարտում թիմերի աշխատանքները գնահատելիս ժյուրին նշանակում է երեք առանձին գնահատական զեկուցողին ըստ երեք անվանակարգերի և երկուական առանձին գնահատական ընդդիմախոսին և գրախոսին՝ ըստ երկու անվանակարգերի:

◆ **Զեկուցողի անվանակարգեր**

1. **Գիտականություն:** Գնահատվում են խնդրի լուծման ամբողջականությունը, գիտականությունը և յուրահատկությունը, լուծման ընտրված մոդելի համապատասխանությունը խնդրի պայմաններին, սահիկաշարի առկայությունն ու որակը, սահիկաշարում ներկայացված առաջադրանքի լուծման ամբողջականության աստիճանը, ցուցադրական փորձի կատարման տեխնիկան և որակը:
2. **Բանավեճ/վերլուծություն:** Գնահատվում են բանավեճ վարելու, առաջադրված հարցերին լիարժեք, սպառիչ և համոզիչ պատասխանելու կարողությունները և թիմի մասնակցությունն ընդհանուր բանավեճին:
3. **Ելույթի ներկայացման կարողություն:** Գնահատվում են բանավոր խոսքը, առաջադրված խնդրի լուծման տարբերակը հստակ ներկայացնելը, հիմնական գաղափարներին ու եզրակացություններին ուշադրություն դարձնելու, ելույթ ունեցողին ուշադիր լսելու և հասկանալու ունակությունները:

◆ **Ընդդիմախոսի անվանակարգեր**

1. **Բանավեճ/վերլուծություն:** Գնահատվում են վերլուծելու, առաջադրանքի լուծման մեջ կողմնորոշվելու, զեկուցողի առաջարկած լուծման դրական և բացասական կողմերը գնահատելու, բանավեճ վարելու ունակությունները և թիմի մասնակցությունն ընդհանուր բանավեճին:
2. **Ելույթի ներկայացման կարողություն:** Գնահատվում են բանավոր խոսքը և գրագետ հարցադրումներ առաջարկելու, սեփական մտքերը համոզիչ մատուցելու, ելույթ ունեցողին ուշադիր լսելու և հասկանալու ունակությունները:

◆ **Գրախոսի անվանակարգեր**

1. **Բանավեճ/վերլուծություն:** Գնահատվում են վերլուծելու, զեկուցողի և ընդդիմախոսի թիմերի կատարած աշխատանքի արդյունավետությունը գնահատելու, առաջադրանքի առաջարկված լուծման դրական և բացասական կողմերը տեսնելու, բանավեճ վարելու կարողությունները և թիմի մասնակցությունն ընդհանուր բանավեճին:
2. **Ելույթի ներկայացման կարողություն:** Գնահատվում են բանավոր խոսքը և գրագետ հարցադրումներ առաջարկելու, սեփական մտքերը համոզիչ մատուցելու, ելույթ ունեցողին ուշադիր լսելու և հասկանալու ունակությունները:

◆ **Ստուգաքային միավորներ և դրանց հաշվարկը**

Հաշվիչ հանձնաժողովը թիմերին նշանակված բոլոր գնահատականները վերածում է միավորների՝ ըստ ստորև բերված աղյուսակի:

Աղյուսակ 2.

Գնահատական	5+	5	5-	4+	4	4-	3+	3	3-
Միավորներ	60	50	42	33	25	18	12	8	5

Հետագա հաշվարկը կատարվում է հատուկ մշակված համակարգչային ծրագրով՝ ըստ բերված գործակիցների:

Աղյուսակ 3.

Անվանակարգ	Գործակից		
	Ձեկուցող	Ընդդիմախոս	Գրախոս
1. Գիտականություն	1,5		
2. Բանավեճ/վերլուծություն	0,8	1,2	0,6
3. Ելույթի ներկայացման կարողություն	0,7	0,8	0,4

Մարտ վարողը նշանակվում է ժյուրիի նախագահի կողմից: Վարողի առաջադրանքը նպաստավոր պայմաններ ստեղծելն է մարտի պատշաճ անցկացման համար: Հաշվիչ հանձնաժողովի հետ միասին վարողը պատասխանատու է միավորների ճիշտ հաշվարկի և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը կազմելու համար:

◆ **Վարողի պարտականություններն են՝**

1. հետևել Մրցաշարի կարգին և չխախտել այն.
2. ներկայացնել թիմերը և ժյուրիին, ընթերցել առաջադրանքների պայմանները և ժյուրիի գնահատականները.
3. անցկացնել ավագների մրցույթը՝ տվյալ մարտում թիմերի դերերը բաշխելու համար.
4. եզրափակիչ մարտի ժամանակ հայտարարել այն առաջադրանքների համարները, որոնք ընդդիմախոսը չի կարող առաջարկել զեկուցողին.
5. հետևել, որ հարցադրումները լինեն ըստ Էության և չկրկնվեն.
6. հետևել բանավեճի ընթացքին և դադարեցնել այն, եթե բանավեճը դառնա ոչ կառուցողական.
7. հետևել թիմերի վարքին և կասեցնել կողմնակի անձանց հետ նրանց խորհրդակցելն ու հաղորդակցումը, երկրորդ նկատողությունից հետո կարգը խախտողին հեռացնել սրահից.
8. հետևել, որ կիսաեզրափակիչ փուլի ընթացքում ժյուրիի անդամներն իրար մեջ չքննարկեն զեկույցները և թիմերի ելույթները.
9. գրատախտակին գրանցել մարտի վերջնական արդյունքները, որ տրամադրում է հաշվիչ հանձնաժողովը, իսկ մարտի ավարտից հետո արձանագրության մեջ գրանցել թիմի զբաղեցրած տեղը.
10. հետևել, որ հաշվիչ հանձնաժողովը ճիշտ լրացնի արձանագրությունը:

◆ **Վարողն իրավունք ունի՝**

1. ընդհատելու մարտի օրակարգը խախտած մասնակցին.
2. բացառելու կրկնվող կամ առաջ քաշված խնդրի շրջանակից դուրս ընկած հարցերը.
3. դադարեցնելու բանավեճը, եթե այն դառնում է ոչ կառուցողական.
4. թույլ չտալու թիմին մասնակցել մարտին (ժյուրիի անդամների համաձայնությամբ), եթե տվյալ թիմն անընդհատ խախտում է Մրցաշարի կանոնները կամ իր վարքով խանգարում մարտի անցկացմանը.
5. անհրաժեշտության դեպքում առաջարկելու և ժյուրիի անդամների համաձայնությամբ ավելացնելու զեկուցողի ելույթի, բանավեճի և ժյուրիի հարցերի ժամանակը ոչ ավելի, քան երկու րոպեով.
6. գնահատականների նշանակումից հետո խոսք տրամադրելու թիմերի ղեկավարներին կամ հանդիսատեսին.
7. մարտից հեռացնելու դիտորդներին և կողմնակի անձանց, մասնավորապես՝ թիմերի ղեկավարներին, եթե նրանք իրենց վարքով խանգարում են մարտի անցկացմանը:

◆ **Վարողն իրավունք չունի՝**

1. խախտելու Մրցաշարի կանոնները.
2. ընդհատելու մասնակիցներին, եթե նրանց տրամադրված ժամանակը դեռ չի սպառվել.
3. մեկնաբանելու, գնահատելու և կարծիք հայտնելու թիմերի ելույթների վերաբերյալ.
4. պարզաբանելու ժյուրիի անդամների նշանակած գնահատականները.
5. տալու ուղղորդող հարցեր.
6. քննարկելու վարողի իրավունքների և պարտականությունների մեջ չմտնող վիճաբանական հարցեր:

Կիսատգրափակիչ և եզրափակիչ մարտերի անցկացման ընդհանուր դրույթներ

Թիմը հաստատում է իր մասնակցությունը՝ կատարելով մասնակցության վճարը մինչև կազմակերպչի նշած վերջնաժամկետը (տե՛ս սույն կարգի «Մասնակցության վճար» հատվածը):

Ընտրական մարտերն անցկացվում են գիտամեթոդական հանձնախմբի հաստատած առաջադրանքներով: Թիմերի նախնական ընտրությունը կատարվում է վարկանշման սկզբունքով: Խմբերը, որոնցում հանդես են գալիս թիմերը, ինչպես նաև ելույթների հաջորդականությունը որոշվում են ըստ վարկանշման արդյունքների:

Թիմի կազմը հաստատվում է մրցաշարի օրվանից երկու շաբաթ առաջ:

Նշված ժամկետից հետո թիմի կազմի փոփոխություն չի թույլատրվում:

◆ Չեկույցի հրավիրելու և դրանից հրաժարվելու կարգը

Ընդդիմախոսը մարտերի ժամանակ կարող է հրավիրել զեկուցողին ցանկացած թեմայով զեկույցի, բացառությամբ՝

- ա) գիտամեթոդական հանձնախմբի չարտոնած թեմաների.
- բ) այն թեմաների, որոնցից զեկուցողը հայտարարությամբ հրաժարվել է.
- գ) տվյալ մարտի ժամանակ թիմերից մեկի արդեն զեկուցած թեմայի.
- դ) նախորդ մարտերի ընթացքում զեկուցողի արդեն զեկուցած թեմայի.
- ե) նախորդ մարտերի ընթացքում ընդդիմախոսի արդեն ընդդիմախոսած թեմայի:

ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՐՏԵՐ

Կիսատգրափակիչի ընթացքում զեկուցողը կարող է երկու անգամ հրաժարվել առաջարկված առաջադրանքի շուրջ ելույթից՝ առանց տուգանային պատժամիջոցների, այսինքն՝ միավորների կորստի: Յուրաքանչյուր երկուսից ավելի հերթական հրաժարման դեպքում զեկուցողի վաստակած միավորները գործակցավորվում են (բազմապատկվում են համապատասխան գործակցով)՝ ըստ ստորև բերված աղյուսակի:

Աղյուսակ 4.

Գործակից	1,00	0,85	0,75	0,65	0,55	0,45
Հրաժարականների թիվը	1 կամ 2	3	4	5	6	7 և ավելի

Կիսատգրափակիչ մարտերում ելույթից երեք և ավելի անգամ հրաժարված թիմը զրկվում է եզրափակիչին մասնակցելու իրավունքից: Սույն արգելքը տարածվում է անգամ այն դեպքում, եթե թիմն իր խմբում գրավել է առաջին տեղը:

Եզրափակիչ մարտին մասնակցում են կիսաեզրափակիչ մարտերում հաղթած թիմերը՝ հաշվի առնելով հրաժարումների վերաբերյալ վերոնշյալ պայմանները:

◆ Եզրափակիչ մարտին մասնակցելու պայմանները

- ա) Եթե կիսաեզրափակիչին մասնակցել է թիմերի երկու խումբ (տեղի է ունեցել երկու կիսաեզրափակիչ մարտ),
 եզրափակիչ են դուրս գալիս յուրաքանչյուր խմբում առաջին տեղը գրաված թիմերը և մնացած թիմերից այն մեկը, որի վաստակած գումարային միավորներն առավելագույնն են: Կիսաեզրափակիչի հաղթող չի կարող ճանաչվել այն թիմը, որն իր խմբում զբաղեցրել է 3-րդ կամ 4-րդ տեղը: Ժյուրիին իրավունք է վերապահվում վիճահարույց դեպքերում այդ կապակցությամբ կայացնել մասնավոր որոշումներ:
- բ) Եթե կիսաեզրափակիչին մասնակցել է թիմերի երեք խումբ (տեղի է ունեցել երեք կիսաեզրափակիչ մարտ),
 եզրափակիչ են դուրս գալիս յուրաքանչյուր խմբում առաջին տեղը գրաված թիմերը: Ժյուրիին իրավունք է վերապահվում վիճահարույց դեպքերում այդ կապակցությամբ կայացնել մասնավոր որոշումներ:
- գ) Եթե կիսաեզրափակիչին մասնակցել է թիմերի չորս խումբ (տեղի է ունեցել չորս կիսաեզրափակիչ մարտ),
 եզրափակիչ են դուրս գալիս յուրաքանչյուր խմբում առաջին տեղը գրաված թիմերը: Ժյուրիին իրավունք է վերապահվում վիճահարույց դեպքերում այդ կապակցությամբ կայացնել մասնավոր որոշումներ:

◆ Եզրափակիչի առաջադրանքներ և զեկույցից հրաժարում

Եզրափակիչ մարտի ժամանակ խաղարկվում են բոլոր առաջադրանքները՝ բացի եզրափակիչ դուրս եկած թիմերի՝ կիսաեզրափակիչների ընթացքում զեկուցած առաջադրանքներից: Եզրափակիչի ընթացքում զեկուցողը կարող է հրաժարվել առաջարկված առաջադրանքի շուրջ ելույթից: Հրաժարման դեպքում զեկուցողի վաստակած միավորները գործակցավորվում են (բազմապատկվում են համապատասխան գործակցով)՝ ըստ ստորև բերված աղյուսակի:

Աղյուսակ 5.

Գործակից	0,5	0,45	0,35	0,25	0,15
Հրաժարականների թիվը	1	2	3	4	5

◆ Թիմային առաջնություն

Եզրափակիչ մարտի հաղթողին շնորհվում է 1-ին կարգի դիպլոմ: Եզրափակիչ մարտի մյուս մասնակիցները ստանում են 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմներ: Եզրափակիչում չորս թիմ ունենալու պարագայում 4-րդ տեղում հայտնված թիմը ստանում է եզրափակիչ փուլի մասնակցի վկայական: Եզրափակիչ չանցած թիմերը ստանում են մասնակցության հավաստագրեր:

◆ Անհատական առաջնություն

Անհատական առաջնության հաղթողը որոշվում է կիսաեզրափակիչ մարտի ավարտից հետո՝ ըստ անհատական վարկանիշի: Այն մասնակիցը, որն անհատական առաջնությունում հավաքել է ամենաբարձր անհատական վարկանիշը, ստանում է 1-ին կարգի պատվոգիր: Անհատական առաջնությունում շնորհվում են նաև 2-րդ և 3-րդ կարգի պատվոգրեր:

Թիմի անդամի՝ որպես զեկուցողի, ընդդիմախոսի, գրախոսի, ելույթները համարվում են հաջող, եթե հաշվի առնված բոլոր գնահատականները «3+»-ից բարձր են: Լավագույն զեկուցողը, ընդդիմախոսը և գրախոսը որոշվում են նույն սկզբունքով, ինչ անհատական առաջնության դեպքում:

Բոլոր մասնակիցները ստանում են մասնակցության հավաստագրեր:

◆ Բողոքարկում

Եթե ծագում են վիճահարույց հարցեր, թիմերն իրավունք ունեն բողոքարկելու արդյունքները: Բողոքարկում ներկայացվում է, եթե թիմը դժգոհ է մարտի մեկ կամ մի քանի մասնակցի՝ Մրցաշարի կանոնների անհերքելի խախտում համարվող գործողություններից, մարտի վարման կերպից և թիմի գործողությունների գնահատումից: Թիմի ավագը գրավոր բողոքն անձամբ ներկայացնում է Մրցաշարի ժյուրիի նախագահին կամ փորձագետ-խորհրդատուին մարտի ավարտից հետո մեկ ժամվա ընթացքում: Բողոքարկումը պետք է ներառի՝

- խախտման փաստի շարադրանքը,
- հղում կանոնների այն կետերին, որոնք խախտվել են,
- հղում առ այն, որ մեկ այլ թիմ (կամ թիմեր) նույնպես նկատել է (են) տվյալ խախտումները (կարելի է հղում կատարել նաև վարողին կամ ժյուրիի անդամներին):

Բողոքարկման դիմումում թիմը պետք է նշի բողոքը բավարարելու իր համար ընդունելի միջոցը: Բողոքարկման բովանդակությունը քննարկելու հարցը որոշվում է ժյուրիի անդամների և կազմկոմիտեի համատեղ նիստում: Եթե ընդունվել է բողոքարկումը քննարկելու մասին որոշում, ապա դրա բովանդակությունը քննարկվում է Մրցաշարի ժյուրիի նիստի ընթացքում:

Բողոքները չեն բավարարվում, եթե՝

- խախտումները դուրս են սույն կանոնների շրջանակից,
- ժյուրին և մյուս մասնակիցները չեն հաստատում խախտման փաստը,
- խախտման գոյությունը կամ բացակայությունը ոչ մի կերպ չի ազդում մարտի ելքի վրա:

Եթե բողոքարկումն արդարացի է, ապա այն բավարարելու ձևը մշակվում է Մրցաշարի ժյուրիի և կազմկոմիտեի համատեղ նիստում:

ԿԱՆՈՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

Մրցաշարի անցկացման ժամանակ կանոններում փոփոխություններ կատարել չի թույլատրվում: Կանոններում հնարավոր անճշտությունների հետևանքով առաջացած բոլոր վիճելի հարցերը լուծվում են ժյուրիի նիստերի ժամանակ: Նիստերին մասնակցում է փորձագետ-խորհրդատուն, որի ներկայությամբ ժյուրին կարող է կանոնները փոփոխելու մասին որոշում ընդունել: Մրցաշարի ավարտից հետո կազմկոմիտեն ձևավորում է Մրցաշարի կանոնները բարելավող աշխատանքային խումբ:

ՊԹՄ ՄՐՑԱՇԱՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ

ՀԱՎԵԼՎԱԾ

Առցանց անցկացման համար

(գործում է 01.05.2020-ից)

ԹԻՄԵՐԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՄԱՐՏԻ ԺԱՄԱՆԱԿ

Ձեկուցողը (կարող է հանդես գալ հայտարարագրված կամ ապահովագրող համազեկուցողի հետ, ինչի մասին հայտարարվում է ելույթի սկզբում) տեխնիկական խնդիրներ ունենալու դեպքում (համացանցային կապի խափանում, հոսանքազերծում...) փոխարինվում է հայտարարագրված կամ ապահովագրող համազեկուցողով, որը շարունակում է զեկուցումը, նույնիսկ եթե հիմնական զեկուցողը վերադառնում է մրցաշարի հարթակ: Համազեկուցողի մոտ տեխնիկական խնդիրներ ի հայտ գալու դեպքում ելույթն ընդհատվում է (նույնիսկ եթե հիմնական զեկուցողը վերադարձել է մրցաշարի հարթակ), և ժյուրին գնահատում է միայն զեկույցի հրապարակված մասը: Ե՛վ զեկուցողի, և՛ համազեկուցողի (ապահովագրողի) մուտքը համարվում է ելույթ (հաշվի է առնվելու ընդհանուր ելույթների թիվը հաշվարկելիս)՝ անկախ զեկուցման մեջ ներդրված չափաբաժնից: Ձեկուցման ընդհանուր տևողությունը կարող է վարողի հայեցողությամբ ավելացվել 30 վայրկյանով:

Երկրորդ և եռակրորդ բանավեճին պարտադիր մասնակցում են թե՛ զեկուցողը, թե՛ համազեկուցողը (ապահովագրողը):

Ընդդիմախոսը (կարող է հանդես գալ հայտարարագրված կամ ապահովագրող համաընդդիմախոսի հետ, ինչի մասին հայտարարվում է ելույթի սկզբում) տեխնիկական խնդիրներ ունենալու դեպքում (համացանցային կապի խափանում, հոսանքազերծում...) փոխարինվում է հայտարարագրված կամ ապահովագրող համաընդդիմախոսով, որը շարունակում է ընդդիմախոսությունը, նույնիսկ եթե հիմնական ընդդիմախոսը վերադառնում է մրցաշարի հարթակ: Համաընդդիմախոսի մոտ տեխնիկական խնդիրներ ի հայտ գալու դեպքում ելույթն ընդհատվում է (նույնիսկ եթե հիմնական ընդդիմախոսը վերադարձել է մրցաշարի հարթակ), և ժյուրին գնահատում է միայն ընդդիմախոսության հրապարակված մասը: Ե՛վ ընդդիմախոսի, և՛ համաընդդիմախոսի (ապահովագրողի) մուտքը համարվում է ելույթ (հաշվի է առնվելու ընդհանուր ելույթների թիվը հաշվարկելիս)՝ անկախ ընդդիմախոսության մեջ ներդրված չափաբաժնից: Ընդդիմախոսության ընդհանուր տևողությունը կարող է վարողի հայեցողությամբ ավելացվել 30 վայրկյանով:

Երկրորդ և եռակրորդ բանավեճին մասնակցում են թե՛ ընդդիմախոսը, թե՛ համաընդդիմախոսը (ապահովագրողը):

Գրախոսը կարող է ելույթ ունենալ ապահովագրող մասնակցի հետ, որը նրան կփոխարինի տեխնիկական խնդիրների դեպքում: Ե՛վ գրախոսի, և՛ ապահովագրողի մուտքը համարվում է ելույթ (հաշվի է առնվելու ընդհանուր ելույթների թիվը հաշվարկելիս)՝ անկախ գրախոսության մեջ ներդրված չափաբաժնից: Գրախոսության ընդհանուր տևողությունը կարող է վարողի հայեցողությամբ ավելացվել 30 վայրկյանով:

Երկրորդ և եռակրորդ բանավեճերին մասնակցում են թե՛ գրախոսը, թե՛ ապահովագրողը:

1.	Ընդդիմախոսն առաջարկում է զեկուցողին զեկույցի թեման, վարողը հիշեցնում է, որ թիմը կարող է վերցնել քննարկման թույլ համար առանձնացված վիրտուալ սենյակում կամ պատասխանել անմիջապես: Չգործակցավորվող հրաժարականների թիվը 2-ն է:	1 թույլ
2.	Չեկուցողն ընդունում կամ մերժում է առաջադրանքը, վարողը հիշեցնում է, որ թիմը կարող է վերցնել քննարկման թույլ համար առանձնացված վիրտուալ սենյակում կամ պատասխանել անմիջապես:	1 թույլ
3.	Չեկուցողը պատրաստվում է ելույթի (վարողը հիշեցնում է, որ թիմը կարող է վերցնել քննարկման թույլ համար առանձնացված վիրտուալ սենյակում կամ պատասխանել անմիջապես):	1 թույլ
4.	Չեկույց	7 թույլ
5.	<i>Ընդդիմախոսը ճշգրտող հարցեր է տալիս զեկուցողին, և վերջինս պատասխանում է: Ճշգրտող հարցեր ձևակերպելիս թիմերին անհրաժեշտ է մշակել ներկայացվող հարցերի հերթականության ռազմավարություն:</i>	2 թույլ
6.	Ընդդիմախոսը պատրաստվում է ելույթի (վարողը հիշեցնում է, որ թիմը կարող է վերցնել ըստ կանոնակարգի քննարկման համար նախատեսված ժամանակը թիմի համար առանձնացված վիրտուալ սենյակում կամ պատասխանել անմիջապես):	2 թույլ
7.	Ընդդիմախոսություն	5 թույլ
8.	Չեկուցողն ու ընդդիմախոսը բանավիճում են:	3 թույլ
9.	<i>Գրախոսը ճշգրտող հարցեր է տալիս զեկուցողին և ընդդիմախոսին, և վերջիններս պատասխանում են: Ճշգրտող հարցեր ձևակերպելիս թիմերին անհրաժեշտ է մշակել ներկայացվող հարցերի հերթականության ռազմավարություն:</i>	2 թույլ
10.	Գրախոսը պատրաստվում է ելույթի (վարողը հիշեցնում է, որ թիմը կարող է վերցնել ըստ կանոնակարգի քննարկման համար նախատեսված ժամանակը թիմի համար առանձնացված վիրտուալ սենյակում կամ պատասխանել անմիջապես):	2 թույլ
11.	Գրախոսություն	3 թույլ
12.	Չեկուցողը, ընդդիմախոսն ու գրախոսը բանավիճում են:	5 թույլ
13.	<i>Չեկուցողի, ընդդիմախոսի և գրախոսի թիմերը ելույթ են ունենում:</i>	1-ական թույլ
14.	<i>Գրախոսը, ընդդիմախոսն ու զեկուցողը եզրափակիչ խոսք են ասում:</i>	30-ական վայրկյան
15.	Ժյուրին հարցեր է տալիս:	5 թույլ
16.	Գնահատում	5 թույլ
	<i>Ժյուրիի խոսքը</i>	մինչև 3 թույլ

ԸՆԴԱՄԵՆԸ

մոտ 1 ժամ